

ԳՕՍՍ 18051-83 Ջերմամեկուսիչ նյութերի և արտադրանքների համար փայտե տարա. Տեխնիկական պայմաններ

3 Տեխնիկական պահանջներ

3.1 Սալերը պետք է արտադրվեն՝ ըստ սահմանված կարգով հաստատված տեխնոլոգիական հրահանգի և համապատասխան են սույն տեխնիկական պայմաններով սահմանված պահանջներին:

3.2 Հիմնական բնութագրերը և ցուցանիշները

3.2.1 Սալերն ըստ տեսակի արտադրվում են հետևյալ մակնիշների.

- ճակատային (Ֆասադային), F - F4, F7

- ներքնապատման մեկ կողմանի հարթ մակերևույթով, N- N 4, N 7 ,

- միջնորմային երկկողմանի հարթ մակերևույթով, M - M 8

3.2.2. Սալերի անվանական եզրաչափերն՝ ըստ մակնիշների, տրված են աղյուսակում:

Թույլատրվում է սպառողների պահանջով այլ չափերի սալերի թողարկումը:

3.2.3 Սալերի եզրաչափերից շեղումները չպետք է գերազանցեն, մմ.

Ըստ հաստության՝ 5,

ըստ լայնության՝ 3,

ըստ երկարության՝ 3:

3.2.4 Սալերը պետք է ունենան ուղղանկյուն զուգահեռանիստի տեսք, ուղիղ երկրաչափական ձև, ուղիղ կողեր և անկյուններ ու հարթ մակերևույթներ:

Թույլատրվում է սպառողների պահանջով այլ ձևերի սալերի թողարկումը:

3.2.5 Սալերի երեսի մակերևույթների վրա թույլատրվող փչուկների և կողմնակի ներխառնուկների չափերը չպետք է գերազանցեն 5 մմ-ը:

3.2.6 Սալերի երեսի մակերևույթների վրա ճաքեր չի թույլատրվում:

3.2.7 Սալերի մակնիշները, ֆիզիկամեխանիկական ցուցանիշները և դրանց համապատասխան նորմերը տրված են աղյուսակում: Սալերի զանգվածային խոնավությունը՝ 7% ոչ ավելի: